

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 43/2

23 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի 28.09.2012թ-ի դիմումով բերված գանգատը « ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 19.09.2012թ. թիվ 1003849 ստուգման ակտի դեմ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի «Տ» պետի 21.06.2012թ-ի թիվ 33-3/[263873]-12 գրությամբ « ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում փաստաթղթեր են ստացվել Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի վերաբերյալ:

Հետաքննության ընթացքում պարզվել է, որ Ա/Ձ Հասմիկ Մարգարյանը, 2012թ. ապրիլ-հունիս ամիսներին ք.Երևան, Խորենացի 33 հասցեում իրականացրել է վարսավիրական գործունեություն 2 աշխատատեղով, սակայն հարկային տեսչություն ներկայացված ձև 1 հայտարարությունում արտացոլել է մեկ աշխատողի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ նյութերի հետագա ընթացքը լուծելու համար անհրաժեշտ է հստակեցնել Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի հարկային պարտավորությունների վերջնական չափը, « ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչի 29.06.2012թ-ի որոշմամբ նյութերով նշանակվել է ստուգում, որի կատարումը հանձնարարվել է « ԿԱ ՊԵԿ ՕՇՎ աշխատակիցներին:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 14.08.2012թ. թիվ 1003849 հանձնարարագրի « Երեսնորոշյալ մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի մոտ կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 19.09.2012թ-ին կազմվել է թիվ 1003849 ակտը, որով արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 109.305 դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե «ա» անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի գործով « ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի 28.09.2012թ-ի դիմումով բերված գանգատի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահին

S.ԲԱՐՍԵԴՅԱՆ